

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀԱՐԱՐ, 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017Թ.
№ 37 (455)

**Պիղապոն՝ս է արդյոք
այսօր ամեն մի մարդ,
Որ քո հանդեպ
ձեռքերն է լվանում...**
Եղիշե Չարեմց



Սյունիքյան ընտրությունների գլխավոր ինտրիգը Եւ դրա խայտառակ տապալումը

Տեղական ինքնակառավարման մարմինների վերջին ընտրություններին առնչվող ամենաուշագրավ ինտրիգը, այնուամենայնիվ, Կապան համայնքում էր:
Ու առավել ակնհայտ դարձավ այն բանից հետո, երբ Աշոտ Հայրապետյանի միակ մրցակիցը կամ պետվող մրցակիցը դուրս եկավ ընտրապայքարից եւ համայնքի ղեկավարի թեկնածուն մնաց մենակ՝ դրանից բխող իրավական հնարավոր ղեկավարություններով:
Բանն այն է, որ «մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին» (ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 118, 2-րդ կետ):
Ինչն էլ թեկնածուի միակ մրցակիցը դուրս եկավ ընտրապայքարից, ո՞վ մղեց նրան այդ քայլին. մինչեւ վերջ այդ հարցերը չկորցրին իրենց հետաքրքրությունը:
Մինչեւ վերջ օդից կախված մնաց հարցը՝ արդյո՞ք այդպես է արվել, որ միակ թեկնածուն բարակ թելով կախված մնա 50 տոկոս + մեկ ձայնից:

Վահրամ Խաչատրյան. «Կապանում բացակայում է բոհեմական միջավայրը»

Գեղանկարիչ Վահրամ Խաչատրյանը նոյեմբերի 10-ին դարձավ 70 տարեկան: Այդ տարիներից 55-ը նա գույների եւ գծերի աշխարհում է, շարունակում է կտավին հանձնել իր մտորումները, խորհրդածությունները, նաեւ անհանգստությունները: Թեեւ առաջացած տարիքին՝

դարձյալ վրձինը ձեռքին է, եւ երբ նրա արվեստանոց մտա, նկարակալի առջեւ կանգնած, արվեստանոցի խորհրդավոր լուսյան մեջ հերթական գեղանկարն էր արարում:

էջ 7

Աղասի Հակոբջանյանը՝ Սիսիանի համայնքապետի ընտրությունների մասին

Սիսիանում հետընտրական կրքերը եռում են: Գրոհ է սկսվել համայնքի ղեկավարի թեկնածու Կարեն Համբարձումյանի, ինչպես եւ Սիսիանի նախկին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի դեմ: Ամեն ինչ արվում է նրանց անվանարկելու համար: Օգտագործվում է զրպարտության, գոտկատեղից ներքեւ հարվածելու մարտավարություն: Մինչ

այդ էլ, քանիցս ոռնոց էր բարձրացվել Աղասի Հակոբջանյանի դեմ, բայց նա խուսափել է հակադարձելուց:
Եվ, այդուհանդերձ, ստեղծված իրավիճակում հարկ համարեցինք մի քանի հարց ուղղել Աղասի Հակոբջանյանին խնդրելով գոնե այս անգամ չհրաժարվել գրույցից:

էջ 4



Համայնքի ղեկավարի ընտրության շուրջ ինտրիգն ավելի էր սրել ՀՀԿ տեղական կառույցի խորհրդավոր պահվածքը:
Կուսակցության այդ, ինչպես եւ մարզային կառույցի ջանքով Աշոտ Հայրապետյանի ենթակամների կամ համակիրների ընդգրկվածությունն ընտրական հանձնաժողովներին հասցվել էր նվազագույնի, եթե ոչ գրոյի:
ՀՀԿ մարզային եւ շրջանային կառույցի ղեկավարները գրեթե ոչ մի անգամ նորմալ ու հրապարակային խոսք չհասցրին՝ ի պաշտպանություն համայնքի ղեկավարի ՀՀԿ-ական թեկնածուի:

Ընդհակառակը՝ գրեթե բոլոր կապանցիների (եւ ոչ միայն) գիտակցությանը հասցվեց տեսակետը, թե իբր Աշոտ Հայրապետյանի առաջադրման եւ քաղաքական կարիերայի միակ հենքը նրա բժիշկ եղբոր մերձավորությունն է երկրի նախագահի ընտանիքին:
Ավելի վաղ հայտնի էր դարձել մարզպետի՝ մինչեւ վերջ հատակ իջնելու իրողությունը. նա փորձում էր ավագանու ապագա կազմում իր համար գրպանային մեծամասնություն ձեւավորել, ինչի համար ակտիվ ու բացեիքաց աշխատանք էր տանում եւ մարզպետարանում, եւ մարզպետարանի ենթակա կառույցներում, եւ Քաջարանի կոմբինատում, եւ Կապանի շատ թե քիչ խոշոր (նաեւ իրենից կախված) տնտեսավարողների միջավայրում:

Ամիսներ առաջ էլ հայտնի էր դարձել, որ մարզպետը ոչինչ չխնայելով պայքարում է Կապան խոշորացվող համայնքի ղեկավարի աթոռին իր առավել հնազանդ սպասավորներից մեկին պատվաստելու համար:
Մի խոսքով՝ նոյեմբերի 5-ի ընտրությունների նախօրյակին մարզկենտրոնում ստեղծվել էր անօրինակ մի վիճակ, երբ կշեռքի մի մտարին մարզպետի գուտ անձնական հավակնություններն էին, մյուս մտարին՝ Կապանի հավաքական արժանապատվությունը:
Ստեղծվել էր մի վիճակ (հավանաբար նախադեպը չունեցող), երբ ՀՀԿ թեկնածուի դեմ պայքարի էր հանվել միայն ՀՀԿ տեղական կառույցը՝ Վահե մարզպետի գլխավորությամբ:

էջ 5

Կառավարության որոշմամբ ստեղծվել է «Մեղրի» ազատ փոխառական գոտի» ՓԲ ընկերություն

Հոկտեմբերի 26-ին տեղի է ունեցել ՀՀ կառավարության հերթական նիստը: ՀՀ Սյունիքի մարզում ԻԻԻ հետ հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծմամբ պայմանավորված կառավարությունը ընդունել է համապատասխան որոշում:

Հիմնավորման համաձայն, ազատ գոտու կազմակերպման եւ զարգացման աշխատանքներն ապահովելու նպատակով հիմնադրվել է «Մեղրի» ազատ տնտեսական գոտի» ՓԲ ընկերությունը: Ազատ տնտեսական գոտու կառուցման առաջին փուլում նախատեսված է կառուցապատել



Մեղրիի մաքսային կետին հարակից տարածքը՝ ապահովելով հիմնական վարչական, արտադրական եւ պահեստային տարածքները: ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունն առաջարկել է «Մեղրի» ազատ տնտեսական գոտի» ՓԲ-ին տրամադրել ՀՀ ՊՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի Ազարակի սահմանային կետի վարչական տարածքը՝ փոխարենը, անհրաժեշտության դեպքում, ծառայությանը հատկացնելով այլ տարածք:

gov.am

Ներկայացվել է Մեղրիի ազատ փոխառական գոտու ստեղծման աշխատանքների ընթացքը



Վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ նոյեմբերի 8-ին տեղի ունեցած խորհրդակցությանը քննարկվել են Մեղրիում ազատ տնտեսական գոտու ստեղծման աշխատանքներին վերաբերող հարցեր: ՀՀ տնտեսական զարգացման ու ներդրումների նախարար Սուրեն Կարայանը վարչապետին զեկուցել է աշխատանքների կատարման ընթացքի մասին, ներկայացրել տեղում իրականացվող միջոցառումները:

Վարչապետ Կարեն Կարապետյանը, ընդգծելով ծրագրի կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման համար, հանձնարարել է շարունակել ուշադրության կենտրոնում պահել Ազատ տնտեսական գոտու կառուցման գործընթացը եւ բոլոր միջոցառումները իրականացնել ըստ սահմանված ժամանակացույցի:

gov.am

Կառավարությունը ջանքեր է գործադրում իրականացնելու երկաթուղու կառուցումը

ՀՀ կառավարությունը «ՌԱՍԻԱ ՖԶԷ» ընկերության հետ 2012 թվականին կնքել է Հայաստանի հարավային երկաթուղու կոնցեսիոն պայմանագիր: Պայմանագրով նախատեսվում է 316 կմ երկաթուղային երկաթուղու կառուցում Գավառ քաղաքի մոտակայքից դեպի Հայաստանի հարավային սահման՝ Մեղրի քաղաքի մոտակայք, որը միանալու է Հայաստանի Հանրապետության առկա կենտրոնական երկաթուղային համակարգին: Կոնցեսիոն պայմանագրի համաձայն՝ նախատեսվում են կոնկրետ ժամանակահատվածներ ծրագրի իրագործելիության ուսումնասիրություն իրականացնելու, ծրագրային ֆինանսավորման, շինարարության եւ շահագործման փուլերի համար: Հայաստանի կառավարությունը համբերատար է

գտնվել «ՌԱՍԻԱ ՖԶԷ»-ի նկատմամբ, սակայն վերջինիս կողմից շարունակաբար խախտվել են պայմանագրով սահմանված եւ վերջնաժամկետները, եւ մյուս պարտավորությունների կատարումը: Հաշվի առնելով վերոնշյալը եւ ծրագրի ռազմավարական նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար՝ ՀՀ կառավարությունը ջանքեր է գործադրում իրականացնելու երկաթուղու կառուցումը «ՌԱՍԻԱ ՖԶԷ»-ից անկախ: Նոր մանրամասների դեպքում կտրվի լրացուցիչ տեղեկատվություն: ՀՀ տրամադրող, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լրատվական ծառայություն

ՏԻՄ 21-ամյակի առթիվ պարվոզներ եւ շնորհակալագրեր է հանձնվել մի շարք համայնքների ղեկավարների

ՀՀ ՏԻՄ համակարգի ներդրման 21-ամյակի առթիվ եւ երեւանում մեկնարկված «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում. հայացք ապագային, ապակենտրոնացման նոր օրակարգ» խորագրով համաժողովի շրջանակում ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանը շնորհակալագրեր եւ պատվոգրեր է հանձնել մի շարք համայնքների ղեկավարների: Անցած տարիներին իրականացրած աշխատանքների եւ ձեռքբերումների համար ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանի շնորհակալագրեր եւ պատվոգրեր է հանձնել մի շարք համայնքների ղեկավարները:

«Լավագույն համայնք-2017» Շիրակի մարզի Արթիկ քաղաքը, «Մշակութային լավագույն համայնք-2017» Շիրակի մարզի Գյումրի եւ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքները, 2006 թվականից անցկացվող «Լավագույն համայնք» մրցանակաբաշխությունը նպատակ ունի ավելի թափանցիկ ու հրապարակային դարձնել համայնքների գործունեությունը, ինչպես նաեւ ձեռա-



ՀՀ վարչապետի հուշանդալի եւ արժանացել Կոտայքի մարզի Աբովյան, Սյունիքի մարզի Մեղրի եւ Վայոց ձորի Զառիթափ ու մի շարք այլ համայնքների ղեկավարներ: Նախարար Դավիթ Լոքյանը շնորհավորել է բոլորին ՏԻՄ կազմավորման 21-ամյակի եւ պարզեատրումների կապակցությամբ: Նախարարը նշել է, որ հաջորդ տարիներին ավելի բժախնդիր եւ հանգամանակից աշխատանք կտարվի ներկայացնելու այն համայնքները, որոնք օրինակելի են ՏԻ համակարգում եւ լավագույն ծառայություններն են մատուցում իրենց բնակիչների համար: Միաժամանակ տեղի է ունեցել Հայաստանի համայնքների միության կողմից ավանդաբար անցկացվող «Լավագույն համայնք-2017» մրցանակաբաշխությունը: Ըստ անվանակարգերի 2017 թվականի մրցանակների են արժանացել

«Տարվա նշանակալից առաջընթաց արձանագրած համայնք» Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքը եւ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքը, «Մաքուր համայնք-2017» Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքը եւ Լոռու մարզի Թումանյան համայնքը: Վորել առողջ մրցակցություն՝ խթանելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Համաժողովի շրջանակում ստորագրվել են նաեւ մի շարք հուշագրեր:

mtad.am

Իրանցիները մտադիր են Մեղրիում թռչնաֆաբրիկա հիմնել. գործարարները հետաքրքրված են

Հայաստանի կառավարությունը «Մեղրի» ազատ տնտեսական գոտի» ՓԲ-ին առաջիկայում տարածք է տրամադրելու: «Ժողովուրդ»-ը տեղեկացավ, որ այն պայմանավորված է ՀՀ Սյունիքի մարզում Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծմամբ: ՀՀ կառավարությունը նախատեսում է Մեղրիի ազատ տնտեսական գոտու կառուցման առաջին փուլում կառուցապատել մաքսային կետի հարակից տարածքը՝ ապահովելով հիմնական վարչական, արտադրական եւ պահեստային տարածքները: Մաքսային հսկողության եւ ազատ տնտեսական գոտու անմիջապես հարեւանությանը գտնվում է գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Ազարակի սահմանային կետի վարչական տարածքը, որի դիրքը եւ կառուց-

վածքը հարմար են ԱՏԳ-ն շահագործելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս խնդրին կառավարությունը լուծում է գտել մասնավորապես ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության կողմից առաջարկվել է ՍԱՊԾ-ից նշված տարածքը վերցնել եւ տրամադրել «Մեղրի» ազատ տնտեսական գոտի» ՓԲ-ին: Ինչի փոխարեն ՍԱՊԾ-ին կհատկացվի ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տարածքը: Նշենք, որ «Մեղրի» ազատ տնտեսական գոտի» ՓԲ-ն հիմնադրվել է այս տարվա օգոստոսի 8-ին, իսկ հիմնադիրն է ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունը: «Ժողովուրդ»-ը տեղեկացավ, որ ընկերության կանոնադրական կապիտալի

էջ 8

